

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 բուլլի, կես տարվանը 6 բուլլ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառէն 2 կոպեկ.

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նպաստ հողատէրերին.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Ընտրութիւնները շուրջը. Պէտք է միշտ պահանջել.
Վրաց մամուլի կարծիքը. Սովետների օգտին.
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գաղափարական ամուսնու-
թեան օրէնք Ունգարիայում. Սանտո կաղէ-
րիօ. Արտաքին լուրեր.—ՀԱՆՈՒԹԻՒՆԵՐ.—ԲՈՐՈՒՄ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նա-
մակ Գերմանիայից.

ՆՊԱՍՏ ՀՈՂԱՏԵՐԵՐԻՆ

Անցեալ տարի, երբ Ռուսաստանի և Գեր-
մանիայի մէջ ծագեց այն մեծ անտեսական
ընդհարումը, որ ստացաւ մաքսային
պատերազմի անունը, երկու երկրների
արդիւնադրոճողներն էլ իրանց ծանր դրու-
թեան մէջ զգացին: Բարձր մաքսերի պատ-
ճառով ռուս երկրագործը չէր կարողա-
նում արտահանել իր դաշտերի արդիւնը-
ները, իսկ սեփական երկրի մէջ պահանջը
վաղուց լրացած էր: Ի՞նչ պէտք է անէր
երկրագործը: Եթէ ցանկանար անպատ-
ճառ ծախել իր արդիւնքները, նա պէտք է
բաւականանար այն չափազանց ցածր գնե-
րով, որ կային ներքին վաճառանոցներում:
Իսկ առանց ծախելու էլ նա չէր կարող
ֆինալ որովհետեւ նրան դրամ էր հարկաւոր
իր ուրիշ պէտքերը հոգալու, իր պարտքերը
հատուցանելու համար:

Բայց կառավարութիւնը հաստատ յոյ-
սեր ուներ, որ կը կարողանայ մեղմաց-
նել այն կռիւլը, որ այնպէս սուր կերպա-
րանք էր ստացել: Նա սկսել էր բանակցու-
թիւններ Գերմանիայի հետ վեցը տարե-
ձին յանձնաժողովներ միջոցով վճռելու:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՆ

Միւնխեն, յունիսի 18-ին

Յունիսի 1-ին Միւնխենում բացվեց գեղար-
ւեստական ցուցահանդէսը: Ամէն օր յաճախորդ-
ների անգլին բազմութիւն դիմում է դէպի «Glas-
palast», առաւօտից մինչև երեկոյ նստում, զմայ-
լում հռչակաւոր գեղարուեստագէտների ստեղ-
ծագործութիւններով: Խառնալից, Ֆրանսիայից,
Ռուսաստանից և ուրիշ երկրներից նշանաւոր
նկարիչներ ուղարկել են իրանց ընտիր աշխա-
տութիւնները: Պատկերներ ընտրելից, պատ-
մական անդադատակ անցալից և ժամանակակից
աւօրեայ կեանքից:

Բնութեան տեսարանները իրանց բազմազան,
բազմոյնակ չնազդութեամբ աւելի աչքի են ընկ-
նում: Ժամերով կանգնում, անկուշտ աչքերով
դիտում էք... Ահաւասիկ կովկասը իր նախնա-
կան վայրենութեամբ, իր կուսական անտառնե-
րով և արիւնաբոլոր չէրէքներով: Ահա Ռուսաստա-
նի լայնատարած դաշտավայրերը, հիսուսային
դաժան բնութիւնը իր արհաւիրքներով: Ովկիա-
նոսն է փոթորկալից բազմութիւն. ալիքները յորձանք
տալով լեռներ են կազմում, յուսահատ նաւը,
յիստին ճգնաժամի մէջ, ապարդիւն մաքաւում է
ընտթեան կատաղի տարրի դէմ. մի օրպէս ևս՝
նա կուլ կը գնայ ամենի կոհակներին...

Ահաւասիկ Ասիան, Արաբիայի անսահման ա-
նապատները թափառական բէշուկներով: Գիւլ
հեռու նայեցէք. Խառնալից չնազդ ընտթիւն
է երևան հանում իր սքանչելիքները: Ահա բա-
նաստեղծական վեհեմակն է պատկերանում ձեր
առջև.—վեհեմակ իր զօնորներով, ընկզմված
անուշ քնի մէջ... Այստեղ Նեապոլն է իր հրապուրիչ
շրջակայանով. հանդարտ, լուսնկալ գիւղերին հե-
ռուից պարզ նշմարվում է վէճուլի հրաբուխը,

համար իսկ մինչև այդ բանակցութիւնների
եղբւր, մինչև միջազգային յարաբերութիւն-
ների վերականգնումը, կառավարութիւնը ու-
րոշեց օգնութիւն տալու երկրագործներին,
տալով նրանց դիւրութիւններ, որ նրանք
իրանց ապրանքները չը ծախեն անձեռն-
առ, ցածր գներով: Այդ նպատակով նա
հրատարակեց կանոններ, որոնք թոյլ էին
տալիս հողատէրերին փոխարինաբար
փող վերցնել պետական բանկից, գրաւ
դնելով բանկում այն հացահատիկները,
որոնք կարած, պատրաստ են շտեմա-
րաններում պահելու համար:

Բարեբաղդաբար, բանակցութիւնները ա-
նց էլ եղբւր ունեցան, մաքսերը իջան և մի-
ջազգային յարաբերութիւնների վերականգ-
նելու շնորհիւ՝ բարձրացան հացահատիկ-
ների գները: Այն հողատէրերը, որոնք օգ-
տվել էին պետական կանոնների արտօնու-
թիւնից, շատ գոհ մնացին կառավարու-
թեան աջակցութեան այդ ձևից. ուստի
խնդրեցին յարկային, որ այն կանոնները, որոնք
հրատարակված էին բացառիկ դէպքում,
բացառիկ պահանջներին համար, դարձնվին
մշտական, յարատեւ, մի և նոյն ժամանակ
լայնացնելով գործադրութեան շրջ-
անը:

Ֆինանսների մինիստրութիւնը, որ ուշի-
ուշով հեռուում էր բոլոր այն գործողու-
թիւններից, որոնք կատարվում էին նրա
հրատարակած ժամանակաւոր կանոնների
համաձայն, համոզվեց, որ փոխառութեան
նոր ձևը շատ նպատաւոր է գիւղատնտե-
սական արդիւնադրութեան համար, ուս-
տի ծրագրեց նոր կանոններ, որոնցով մըշ-
տական բնաւորութիւն է արվում այն օ-
ժանդակութեան, որ կառավարութիւնը սահ-
մանափակում էր իր յարկային մէջ

որից թանձր մուկը ամպանման սիւներով երկնք
է բարձրանում: Խորը հիացում է տիրել նայողնե-
րին, այնքան բնական, այնքան կենդանի է նկարը:

Մի այլ տեղ աւստրիական Տիրօն է իր անար-
կու կիւրծերով, խորխորատներով: Իսկ այնտեղ ա-
հա Ալպեան վեհապան լեռներն են, որոնց ձիւ-
նապատ կատարները շողողում են վերջնալիսի
ձաճանչների տակ:

Անցնենք ուրիշ նկարներին: Վերջին Ֆրանս-
պոլսական պատերազմը շատ նկարիչներին է
նրկ տուել: Կան պատկերներ նաև Նապոլեոն
I-ի արշաւանքներից:

Ալպեան էն՝ «Հայրենիքի ճանապարհին», «Ս-
լնատիկը», «Փայտաւոր դէպի Սիլվապոս», «Մահ-
վան համբոյը» և այլն: Այդ նկարները գրեթէ բո-
ւորն են Միւնխենի նկարիչների գործ են: Անմահ
է «Եղբայր խնայողութեան» նկարը, որ պատկա-
նում է Միւնխենի յայտնի նկարիչ Մէյերի վրձինին:

Գիւլեր են Յուդան մաւր, խղճահար կանգնած է
անտառի խորխորատ մթութեան մէջ: Փռք հե-
ռու, ծառերի տերեւախիտ կամարի ետեւից, որ-
պէս մարմնացած վրէժխնդրութիւն՝ հետեւում է
նրան Յիսուսի սպանալից ուրուականը: Յուդան
դարձրած դէս ու դէս է երբեմն. նրա դէմքն
արտայայտում է և սարսափ, և ապաշաւանք: Այն-
տեղ բանաստեղծի խօսքերն են կարգաւորում.

«Ի՞նչ հեռանում ես մտքից սեւամաճ,
Ստակալի պատմից արդեօք ուր փախչեմ?»

Մի այլ պատկեր գրաւել է ընդհանուր ուշա-
դրութիւնը, թէ գեղարուեստական ներութեամբ
և թէ իրօրինակ բովանդակութեամբ: Այդ պատ-
կերը կոչվում է «Ստիլադ և Սարկա»։ Նրա սիւ-
նիքն է պատմական հեռավոր անցեալից,
որից քաղաքակրթութիւնը դեռ ևս իր սաղմային
վիճակի մէջ էր գտնվում: Այն ժամանակ մարդկա-
յին հասարակութեան մէջ, այսպէս կոչված «մայ-
րական իրաւունքը» կամաց-կամաց տեղի էր տալիս
«հայրական իրաւունքին»։

*) Գաւի դեռ մարդկութիւնը ապրում էր վայրե-
նութեան և մասամբ բարբարոսութեան շրջանում,

մանկ էր յայտնի դէպքի համար: Նոր
կանոններով մինիստրութիւնը ընդունում
է գրաւ ոչ միայն մաքրած հացահատիկ-
ներ, այլ և դեռ չը կարածը, և բացի
հացահատիկներից, նոյնպէս և մի քանի
ուրիշ արդիւնքներ, ինչպէս են՝ իւղատու-
հատիկներ, օրինակ վուշ, կանեփ և այլն,
տալով կարած, մաքրած հացահատիկի
համար արժէքի 75% իսկ չը կա-
սածի համար միայն 40 տոկոս:

Մինիստրութեան այս կարգադրութիւնը
շատ համակրելի է և նպատաւոր ար-
դիւնադրութեան համար: Հողատէրը չի
շտապի աշխատ անձեռնառու պայմաններով
վաճառել իր հողի արդիւնքները, այլ կը
սպասի մինչև այն ժամանակը, երբ վաճա-
ռանոցի պայմանները կը դառնան նրա հա-
մար նպատաւոր:

Ի՞նչ նոր կանոնները նայել են գործին
աւելի լայն կերպով, քան նախկին ժամա-
նակաւոր կանոնները, բայց նրանք այն-
քան էլ լայն չեն, այլ սահմանափակ-
վել են միայն այն արդիւնքների շրջա-
նում, որոնք հեշտ կարող են պահվել ամ-
բարներում, առանց բարդ յարմարութիւն-
ների:

Սակայն ուրիշ շատ գիւղատնտեսական
արդիւնքներ, ինչպէս են բամբակը, կաթ-
նատնտեսական արդիւնքները, գինին և այլն,
նոյնպէս կարօտ են պետական բանկի փո-
խառութեան: Այն պատրաստականութիւնը,
որ ցոյց է տալիս մինիստրութիւնը դէպի
արդիւնադրութեան օժանդակութիւնը և
աջակցութիւնը, հիմք են տալիս յուսալու,
որ շուտով մինիստրութիւնը կը մշակի աւելի
մեծ ծրագրի, գործողութեան աւելի լայն
շրջանով:

Այդ անցողական շրջանի մէջ հարաւային Ամե-
րիկայում աւագ օսն կան երկ կատաղի մոլե-
ռանդութեամբ մաքաւում էին տղամարդկանց ի-
րաւունքը.—«Vaterschaft»-ի դէմ: «Ստիլադ և Սար-
կա» նկարը պատմական այդ նշանաւոր մոմէնտն
է պատկերացնում իր մէջ: Հսկայատիպ կանայք
կուր են մղում ընդդէմ այն տղամարդկանց, ո-
րոնք չէին ուղում ենթարկվել նրանց իշխանու-
թեան: Կուրն ուղղված է զլիաւորապէս անհա-
ղանդների պարագլխի դէմ, որը մի ազնուական
էր, Ստիլադ անունով: Այդ Ստիլադին ոչնչացնե-
լու համար ամառանկանքը ջոկում են իրանց
շարքից Սարկա անունով մէկին, որը և ամենա-
գեղեցիկն էր, կապում են նրան մի ծառի բնից,
ուր նա իր թէ հալածված ընկերութիւններից մա-
քաղը որսատեղից դառնալով, ճանապարհին նկա-
տում է կապոտած Սարկային, ցաւակցելով մո-
տենում է, որ միտի Սարկա... բայց նա իր միա-
մտութեան դոճ է գնում: Սարկային աջողվում է
քնեցնել նրան թրեղողիչ հեղուկի միջոցով...
Տեւած սիգնային վրա են հասնում դարանամուտ
ընկերութիւնները և մեռնում են Ստիլադին:

Ժամանակակից կեանքը ևս իր դառնութիւննե-
րով արձագանք է գտնում գեղարուեստի մէջ:
Հեղահան է իր օլիմպիական բարձրութիւնից ցած
է իջնում գեղարուեստագէտը և սկսում է իրա-
կան կեանքի երեւոյթներով զբաղվել: Այսօր,
երբ ամենուրեք այնքան արդէն սուր կերպարանք
է առել անտաղ օսն իդմը՝ հարստահարող և աշ-
խատաւոր դասակարգի մէջ, գեղարուեստը ուշի-
ուշով քննում է այդ դասակարգային կռիւլը, նա

կինն էր տղամարդու վրա տիրապետողը. նա էր, որ
թէ ընտանիքի և թէ կեանքի այլ և այլ խնդիրներ
մէջ գերիշխող էր հանդիսանում: Այդ շրջանը
կոչվում է «Mütterrecht»-ի կամ «Mütterschaft»-ի
շրջան: Բայց կուտուրան առաջ քաշելով, փոքր
առ փոքր ծնունդ է առնում անհատական սե-
փականութիւնը, վերանում է «Mütterschaft»-ը
և ասպարէզն անցնում է «հայրական իրաւուն-
քին» (Vaterschaft):

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԾՈՌԱԸԸ

III

Աչքի անցկացրինք խաւարամիտների օրգաննե-
րի վերջին համարները.— անկարող ենք մեր
ծիծաղը զսպել:

Հա, հա, հա, Նայեցէք, ուղբեր են խօսում ազ-
նուութեան, սրբութեան, շիտակութեան, արդա-
րութեան մասին:

O tempora, o mores. Այն մարդիկ, որոնք
յայտնի են ամբողջ հասարակութեանը, իբրեւ
զուտ խաչագործներ, այն մարդիկ, որոնք ամ-
բողջ անցեալը խաւարեցրել են, եղութաւորութիւն
է, վերջապէս այն մարդիկ, որոնք անունը արդէն
հեղուկ է որ և է ազնուութեան, մաքրութեան
գաղափարը.—այդ մարդիկ, այսօր դառնաւ մօրթի
հագած, խօսում են շիտակութեան, մաքրութեան,
ազնուութեան, արդարութեան մասին...

Հա, հա, հա: Պարոններ, մի մոռացէք այն
խելացի առածը, որ ասում է, «ամեն մարդ իրա-
ւունք ունի իմար ինիւն, բայց ուրիշին յիմարի
տեղ դնել իրաւունք չունի»:

Ում էք յիմարի տեղ դնում, հասարակութեանը
բայց չը գիտէք միթէ, որ այդ նոյն հասարակու-
թիւնը շատ լաւ գիտէ ձեր անցեալը, ձեր բոլոր
քաղաքործութիւնները, և դրոշմը է ձեր ճակա-
տին՝ ձեր իսկական անունը:

Որպէս զի հասարակութիւնը ձեզ հաւատալ,
զուր պէտք է նորից ծնվէք, պէտք է փո-
խէք ձեր անունը, պէտք է ուրանաք
ձեր անձը, և այնպէս հրապարակ դառ:

Փոխեցէք ձեր անունները, նորից ծնվեցէք, եթէ
կարող էք, և այն ժամանակ դուք ձեզ հաւատաւն:

արդէն լուրջ կերպով սկսում է հետաքրքրվել
պրօլետարի վշտալից կեանքով և այդ կեանքից
նրկ առնել իր ստեղծագործութիւնների հա-
մար:

Հիանալի է, վերին աստիճանի օրիգինալ, Հանս
Մէյերի «Steinklopf» նկարը: Ծերունի քարտաշը
մեռնում է աշխատելու միջոցին իր քարակոյտի
վրա: Նրա յօնքերը, աչքերի թերթաւորները
տակաւին ծածկված են սպիտակագոյն փոշով.
ձայն ձեռքը թոյլ կերպով ցած է ընկած, աջ
ձեռքը դեռ ամուր բռնած է մուրճը: Ամբողջ
Ֆիգուրը նկարված է դարձնալիս հմուտ-
թեամբ: Նրա ետեւին կանգնած է «մահը», օրհա-
սական մանդաղը ձեռքին և սփոխանք է կարդում
ծերունուն:

Չարկիր, զարկիր թշուառ ծերուկ.
Բաւ է սակայն... Հիմա տանջվեցիր.
Թող ապերախտ այդ չաքուծը.
Արի գիրկս հանգստացիր...

Բերլինի գեղարուեստագէտ Ննա Ֆէրբալմի
«Սով» նկարի մէջ մենք գտնում ենք սրտաշարժ
տեսարաններ «աշխատազուրկ» բանուորների կեան-
քից: Բիրերման և Կօրլես պատկերացնում են
գիւղական և քաղաքային աշխատաւոր կանանց
տխուր վիճակը:

Բէլգիացի Հանրի Լիւտէն իր «Kampf ums
Dasein» նկարի մէջ ներկայացնում է գոյութեան
կուր բոլոր արհաւիրքները: Բանուորները ապա-
տամբվել են: Խուռն բազմութիւնը վայրենի աղա-
ղակներով դոճ է տալիս դէպի առաջ, դէպի...
Ներքեւում, յատակի վրա ընկած են վիրաւորված-
ները: Այդ ընդհանուր խուճուկեան մէջ ծածան-
վում է կարմրագոյն դրօշակը, իսկ այնտեղ, ան-
կիւնում գետնի վրա, խոշոր տա-
ռերով դրօշակած է. Du pain...

Մ. Յովհաննիսեան

Իսկ այժմ, այժմ... Դեր ուղղորդող ուղի միայն ծիծաղ է չարություն...

Հասարակական գանազան շրջաններում մեծ դժգոհություն է տիրում մի խումբ քաղաքացիների անսանձ վարմունքի դեմ:

Մենք չենք հասկանում, միթե թիֆլիսի առաջնորդը չէ մտածում այդ տերություններին սանձաճարձակության իսկ մեծ ստիպված ենք (Մշակի) էջերում խոսել այնպիսի տեղեկությունների մասին, որոնց անունները յիշեն անգամ մեծ պատերազմի շրջանը:

Բայց քննադատ չը յիշե՞ք: Եկե՛ք հիշե՛ք, որ մեծ ժողովուրդը մեկուսի, Զորքայի եկեղեցում, մի քաղաքացի (անունը Մանուկյանն է) համարձակվում է ընտրություն օրը, պատարագի վերջում, դիմել ժողովուրդին և ասել. «Նշանակում եմ սուրբ պատարագով իրենց, որոնք ձայն կը տան այս և այն մարդկանց, որոնք անաստուծաներ են, որոնք եկեղեցու թշնամիներ են և այլն և այլն: Ժողովուրդը լսում է և չլիզվում: Լուրը կայծակի արագությամբ տարածվում է քաղաքում, բայց քաղաքում մինչև այժմ էլ չէ պատժված...»

Մի այլ փաստ. էջմիածնացի եկեղեցու ընտրություն նախագահող քահանայի (անունը Սարգիս քահանայ Աղաջանյանն է) համարձակվել է առաջնորդին ներկայացնել մի պաշտօնական հայտագիր, որով զեղծում էր իրեն, բոլոր ծխականներին դեմ, մի ամբողջ ժողովուրդի դեմ:

Մի որ և է վարձկան, գաղթելի թերթի իրաւունք ունի որքան կամենում է հայտնել, վարձարհաշուները անել...—մի է մարդու տեղ դնում. բայց մի քահանայ համարձակվել պաշտօնական գրություն հայտնել ժողովուրդին ամենամեծ վայելքներով...—այդ անհեղինակ է. այդ անտանելի է: Տեսե՛ք թե՛ բանը որտեղ է հասել, որ այդ ողորդիկը քահանայի, որի ամբողջ շնորհը քննելու ունի և մեծ թողնել է, յանդգնություն ունի չը հաւանելու հայտ աշխատանքով ապրող դուրգուներին, մշակներին, արհեստագործներին, ձկնորսներին...

Դա բաւական չէ. այդ ողորդիկը քահանայի իրաւունք է համարում պաշտօնական կարծիք տալու, թէ պէտք է ժողովուրդից լսել ընտրական իրաւունքը, և թէ ժողովուրդի այդ ընտրությունը չէ ընտրություն ոչ Աստուծոյ, ոչ եկեղեցւոյ...

Եւ այդ քահանայի մինչև այսօր անպատիժ է մնում...

Ժողովուրդին հայտնում է.—մի,—քահանայի փողով ընտրողներ է հրաւիրում.—մի,—քահանայի: Կեղծ ցուցանիքներ է կազմում.—մի,—քահանայի: Ամեն աշակերտներին մատնում է.—մի,—քահանայի: Խոտով թիֆլիսներ է դրում.—մի,—քահանայի: Ընտրությունները ժամանակ ամեն տեսակ զեղծումներ է գործում.—էլի քահանայի: Առաջնորդին ամեն տեսակ շինում, խայտառակ զեկուցումներ է տալիս.—էլի քահանայի, և ահա թէ ինչու այս բոլոր պէս թիֆլիսի հասարակական բոլոր շրջաններում տիրում է մի անհեղինակ դժգոհություն: Դեպի այդ տեղեկությունները: Սպասում են, թէ ինչ կանի հոգեւոր իշխանությունը:

Մի փոքր էլ սպասենք:

ՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՇՏ ՊԱՆՈՍՏԻՆ

Նրբ մի անձն մի անգամ յանձն է առել հասարակական մի գործ վարելու, նա պարտական է այդ գործը ամենայն բարեխղճութամբ տանելու և պէտք է պատրաստ լինի հասարակական դատաստանի պահանջներին պատասխան տալու:

Այդտեղ այլ ևս չէ կարելի գանազան առարկություններ անել՝ արդարացիելու ստանձնած պաշտոնի մէջ տեղի ունեցող դանդաղությունները և առհասարակ նկատուող անգործությունները: Եւ անհրաժեշտ է գործ պատճառով անկարող է, անընդունակ է գործ պաշտոնը ստանձնելու, իսկ այդ սխալը անհրաժեշտ պաշտոնը ստանձնելու, իսկ այդ սխալը անհրաժեշտ պարիզի և աւելի ձեռնհասներին թողնել իր պաշտոնը:

Ամեն օր լսում ենք, թէ չը պէտք է վշտացնել այս կամ այն գործողի սիրտը, նրան քննելով, յանդիմանելով, որովհետեւ, օրինակ, մէկը շատ զբաղված անձն է, միւսը ընտանիքով ծանրաբեռնված է, երրորդը զեռ շատ անխորձ է, չոր-

րորդը արդէն յոգնած է, հինգերորդը հիւանդ է և այլն և այլն:

Այդպէս ի՞նչ կը հասնի: Եթէ մենք թողնենք պաշտոնին համապատասխան գործ պահանջելը, այլ նայենք իրերի վրա և պատճառ կը գտնենք արդարացիելու նրան անգործությունը, անհոգությունը, ծուլությունը և անտարբերությունը: Ով գիտէ մենք մինչև անգամ հասնենք փիլիսոփայական եզրակացությունների իսկական անգործություն մէջ աշխատելու տեսնել սպասողական դիրք, նրանց անընդունակություն մէջ՝ ծածկված հեռատեսություն, նրանց անաշուղդությունների մէջ՝ խորհրդաւոր քաղաքականություն և այլն:

Այդպէս ի՞նչ կը հասնի: Կարող ենք այդպիսով երբ և ինչ արե՞նք հասկանալ, թէ ինչ ենք անում ինքներս և կարող ենք խաբել հասարակությունը:

Ո՛չ, երբեք ո՛չ: Եւ հաւատացած կացե՛ք, որ մենք միայն մեկ ենք խաբում: Հասարակությունը արդէն սկսել է հասկանալ, թէ ինչ է կատարվում նրա շուրջը. նա սկսել է դատել ճիշդը անճշդից, արդարությունը անարդարությունից, խաբէությունը ճշմարտությունից: Եւ ոչ մի վարպետական հնարագործություններ, ոչ մի պաճուճանք չեն կուրացնի այն աչքերը, որ արդէն բացված են դառն փորձերից յետոյ:

Ուստի, թող իմանան մեր հասարակական գործիչները, ինչն իրենք ընկերություններին, վարչություններին, հոգաբարձություններին, թէ ուրիշ հիմնարկություններին մէջ պաշտօնավարներ, որ հասարակությունը սպասում է իւրաքանչիւրից իր պարտականությունների կատարումը: Թող իւրաքանչիւրը լաւ հասկանայ, որ համբերող հասարակությունը կարող է վերջապէս զայրանալ և նրանց ճակատին դրոշմել հրապարակապէս՝ անընդունակ և անբարեխղճների անուններ:

Ն.—

ՎՐԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ

Վրաց «Կվալի» շաբաթաթերթը տպագրել է մի յոդուած «Հայոց դպրոցական հոգաբարձուների ընտրությունները» վերնագրով, որը մենք առաջ ենք բերում նոյն ութ եւ ամբ, առանց մեր կողմից որ և է բան փոփոխելու և աւելացնելու:

«Քառասնական թւականներին Ներսէս կաթողիկոսը թիֆլիսում հիմնեց հոգեւոր սեմինարիա, որտեղից պէտք է դուրս գային կրթված հոգեւորականներ: Այդ սեմինարիայում կրթված հոգեւորականները իր ժամանակին մեծ օգուտ տուեց հայերին, ազգայնությունը զարգացրաւ մտքներով հայ ժողովուրդին մէջ: Վրաստանում ցրելու ցան և դաժ հայերը այդ ժամանակ մտացել էին իրանց մայրենի լեզուն և հին Հայաստանի՝ իրանց հայրենիքի սէրը: Հոգեւոր սեմինարիայում կրթված հոգեւորականները կարողացաւ իշխել ցիր ու ցան և մայրենի լեզուն մտացած հայերի մէջ դարձնել մայրենի լեզուի սէրը, կրօնական զբաղմունքն ու միմեանց հետ ունեցած համերաշխությունը: Այդ հոգեւորականներին 50 տարւայ ընթացքում մեծ հոգի և թեւեր տուեց հայ ժողովուրդին, ամեն եկեղեցու մօտ հիմնեց հայոց դպրոց և այդ դպրոցներին միջով անցկացրեց մի քանի սերունդ, իր ժողովուրդին մայրենի լեզուով խօսեցրեց և կրօնի միջոցով միացրեց զրանց միմեանց հետ: Տուեց այդ ժողովուրդին մի նպատակ, այն է հոգեպէս զարգանալը և նիւթապէս ապահովվել: Այդ գործում հայ հոգեւորականները օգնեց բարձրագոյն դպրոցներում ուսում ստացած հայոց հին սերունդը: Այդ սերունդը եղաւ յիշեալ դպրոցի առաջնորդը և ղեկավարը: «Բայց ասում է. «ա մենք բարձր բանի ետեւից միշտ չարն էլ է ման գալիս»: Այս դէպքումն էլ այդպէս պատահեց: Յիշեալ բոլոր ղեկավարները հարուստ վաճառականների, բժիշկների, ծառայող պաշտօնականների որդիքն էին: Նրանք հետեւեալ ծրագիրը կազմեցին. ամեն ոյժ գործ դնել, որ հայերը միմայն իրար հետ համերաշխ լինեն, իրար ձեռք ձեռքի տան, իրար առաջ տանան: Մեզ ինչ փոյթ, եթէ հարեան ժողովուրդին շուրջ կը տանի», ասում էին նրանք: Ուղիղ է, յիշեալ ծրագիրը հայ վաճառականներին հարստացրեց, բայց երկրագործի և ստորին աշխատող ժողովուրդի կաշին հանեց: Փողատէր

մարդը միշտ այդպէս է. լինի նա հայ, վրացի, եղբայր, թէ բարեկամ, նրա համար այդ մի և նոյն է, նա խիղճ չունի: Նա պէտք է իր փողի տոկոսը վերցնի և որքան շատ կը վերցնի՝ այնքան իր համար լաւ է: Եթէ փող է շահով տալիս, արժանի տոկոս էլ պէտք է վերցնի: Ահա այդպէս վարվեցին հայոց հարուստ վաճառականները և հոգեւորականները, իսկ զրանց այդ բանին խախտեց հայոց ուսումնական հին սերունդը: Նա բաւական չէր.—«Աղքատներն որքան շատ տաս, ցականչում էր.—«Աղքատներն որքան շատ տաս, ցականչում էր.—«Աղքատներն որքան շատ տաս, ցականչում էր: Այդ պատճառով հարուստ վաճառական հայերը իրանց կապիտալի միջոցով ինչպէս աղքատ հայերի, այնպէս էլ աղքատ երկրագործ վրացիների գլխին նստեցին: Այդ յատկությունների տէր են թիֆլիսի այժմեան հարուստ վաճառականները և զրանց զլխաւորները:

«Սակայն այդպիսի անխիղճ գործին հայոց նոր սերունդը թշնամական աչքով նայեց, տեսաւ, որ իր եղբայրակից հին հայերը միմայն իրանց անձնական օգուտ համար են աշխատում, այդ պատճառով նկատեց հին սերունդին. «Դուք էք սերմանում հայոց և վրաց մէջ թշնամություն: Հայոց նոր սերունդը շատ լաւ հասկացաւ, որ հին սերունդը հովանաւորում է անբարոյական հոգեւորականներին, կապիտալիստներին, այդ պատճառով սկսեց հին սերունդի դէմ սարսափելի հակառակություն:

«Այսօր հայոց երիտասարդներին հայոց հին սերունդի բոլորովին չէ հաւատում: Շատ ժամանակ չէ, ինչ որ այդ երիտասարդներին գործելու առաջարկող դուրս եկաւ, բայց բաւական աղքատներին ձեռք բերեց հայ ժողովուրդի վրա: Նրա ետեւում գործունէությունը հայ ժողովուրդի յառաջադիմութեան և բարոյութեան համար մեծ համակարգը վատտակեց: Հայոց այդ նոր սերունդը չէ հաշտվում ոչ անձնական օգուտ փնտռող հարուստներին և ոչ էլ վարձով ընկած նրանց զլխաւորներին: Հայոց նոր սերունդը համահաւասար եղբայրական սիրով նայում է ինչպէս հայ ժողովուրդի խեղճ մասին, այնպէս էլ վրաստանի աղքատ ժողովուրդին:

«Ահա այդ սերունդը այս տարին հին զլխաւորներին հալածեց սեմինարիայի և դպրոցների հոգաբարձությունից և նոր հոգաբարձուներ ընտրեց երիտասարդ, կրթված և իսկապէս ազգի համար ցատող մարդկանց: Ոչ Գ. Եւանդուկանը, ոչ Ա. Եւանդուկանը և ոչ իշխ. Կ. Բեհրուդեանը չը համարձակվեցին նրանց հետ իրանց քուէտուփելը դնել:

«Այդպիսով նոր սերունդի աւելի կրթված մարդիկ զարձան հայոց դպրոցների ղեկավարները և յուսալի է, որ նրանք աւելի առաջ կը տանեն Ներսիսեան սեմինարիայի և այլ դպրոցների գործը, յուսալի է, որ նրանք աւելի սէր և բարեկամական յարաբերություն կը հաստատեն վրաց և հայոց մէջ: Նոր սերունդի ներկայացուցիչ լրագրիչներն են՝ Մշակը, Մարտին, «Տարազը»: Այդ խմբագրությունները զլխաւորները և աշխատակիցները ուղում են մօտենալ մեր երիտասարդներին, որովհետեւ նրանց և մեր նպատակները մի և նոյն են: Մեր մէջ ևս յայտնվեցան, ինչպէս հասարակական ասպարիզում, այնպէս էլ բանկային վարչություն մէջ այնպիսի կապիտալիստներ և անձնական օգուտ որոնող անձինք, որոնք նոյն սուածն են կրկնում, ինչ որ հայ հարուստները. «աղքատներն որքան շատ տաս, այնքան շատ կը պահանջե՛ն:

«Այդպիսով թէ մենք և թէ հայոց նոր սերունդը մի և նոյն նպատակն ունենք, այն է դիմադրել ժողովուրդի կեղծաւոր բարեկամներին, նրան աղքատացնողներին:

Գ. Եւանդուկան

ՍՈՎԵՏԱՆԻՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք թիւրքաց Հայաստանի, Երևանի ու Կարսի նահանգների սովետների օգտին.

- 1) Բագու-Էրի, Ա. Ա. Աղաճանից, Եր. Ա. Եր. Ղևազարեանից, Ի. Պ. Մարգարեանից և բժիշկ Մ. Տէր-Օսանեանից՝ իրանց մէջ հանգանակած 55 բ.
- 2) Թիֆլիսից, մի Կարսի, 5 բուրլի:
- 3) Բագու-Էրի, Եր. Ղևազարեանի միջոցով, 25 բուրլի, որ հանգանակել է կայարանի մի խումբ գործակալներից և կալիստներից:
- 4) Թէլաւի գաւառի Հին-Գաւառի գիւղից, Գ. Ղարապետեանի միջոցով, նոյն գիւղում հանգանակած 20 բուրլի:

5) Բագու-Էրի, Մ. Շախանի միջոցով 27 բ., որ հանգանակված է Շիրակի և ընկ. գործարանի մի խումբ հայ և օտարազգի ծառայողներից:

6) Թիֆլիսից, Վարդան Բաղդասարի միջոցով, 10 բ. 20 կ., որ հանգանակել է մի խումբ խոհարարներից և չորս արհեստագործներից, վերահսկող ուղարկելու համար:

7) Բագու-Էրի, Եր. Ղևազարեանի միջոցով, 14 բ. 28 կուպ:

8) Բագու-Էրի, Հայրապետ Մուշկանթարեանից, 5 բուրլի, վերահսկող ուղարկելու համար: Ուրեմն նախկին 341 բուրլի 69 կուպէկ հետ այժմ ունենք ընդամենը 503 բուրլի 17 կուպէկ: Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 6834 բուրլի 2 կ. ուղարկել ենք 6331 բուրլի:

ՆԱՄԱԿ ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, յունիսի 26-ին «Արձագանքի» № 63-ի մէջ լոյս տեսաւ մի նամակ «Բագուցի» ստորագրութեամբ:

Դուք, պ. Բագուցի, ձեր նամակում թող էք տալիս ձեզ «անբարեխիղճ սուտ» անուններով «Մշակին» № 61-ում իմ ստորագրութեամբ հաղորդած տեղեկությունները: Կարդալով ձեր այդ յանդուգն զրպարտությունը և մի և նոյն ժամանակ ստորագրութեան համարելով լրագրական որ և է բանակցութեան մէջ մտնելու գաղափարով սկսած արշաւանքի հերոսից հետ, վճռեցի աւելի նպատակայարմար միջոցի դիմել՝ պատուել տալ ձեր դիմաւոր, տեսնել իսկական հերոսի և ընկերական դատի հրաւիրել:

Այդ դիտաւորութեամբ ամսիս 10-ին նամակով դիմեցի «Արձագանքին» խմբագրութեան խնդրելով որ յայտնէ ձեր անուն ու աղգանունը, սակայն իր դուր. ահա ամբողջ 16 օր է սպասում եմ, բայց ոչ նամակս լոյս տեսաւ և ոչ որ և է պատասխան տրվեց...

Սրբ, որովհետեւ ես երբեք թող չեմ տուել ինձ ոչ թէ ստույթներ, այլ և որ և է անճշդութեան «Մշակին» ուղղած թղթակցություններին մէջ, ուստի կրկնում եմ, ձեր ասածը մի յանդուգն զրպարտություն է, որի համար և ձեզ ընկերական դատի եմ հրաւիրում: Բարեհաճեցե՛ք, պ. Բագուցի, յայտնել ուրեմն՝ ով էք դուք...

Ն. Կաթանյան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից մեզ գրում են, որ թիւրքաց կառավարությունը ամեն ջանք գործ է դնում, որպէս զի պատրիարք ընտրվի տիրահալկ Բարթողիմէոս Կալիսկոյոսը, որը ահա աւելի քան հինգ տարի է երազում է պատրիարքական աթոռը բարձրանալ:

Մեզ հաղորդում են, որ մի քանի մարդկանց մէջ միտք է յղացել հիմնել թիֆլիսում մի հայերէն դիտնական թերթ, որի նպատակը պիտի լինի ժողովուրդացնել զիտությունը քաղաքում:

Մեզ հաղորդում են, որ թիֆլիսի առաջնորդաւորում խօսակցութիւններ են լինում Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան իրաւունքները սահմանափակելու մասին: Եւթնորդութիւն կայ առաջարկութիւն անելու, որպէս զի դպրոցի տեսուչը նշանակվել կաթողիկոսի կողմից, և տեսուչը ինքը կազմի ուսուցչական խումբ, առանց հոգաբարձութեան մասնակցութեան: Ահա թէ որտեղ են հասնում եզրույթների ցնդաբանությունները: Լաւ երազ է, այնպէս չէ:

Երբեք մի և Ալաշկերտից ստացած նամակներից տեղեկանում ենք, որ ցանքսը այդ կողմերում խոտատում է առատ հոսուն: Հացի գինը էր գրում նահանգի մի քանի տեղերում մի փոքր էր ջնդ է: Կարսի և Տրապիզոնի կողմերից հացահատիկներ են ներմուծվում դէպի Երբուրումի կողմերը:

Կովկասեան կառավարապետի դիւանատունը յունիսի 26-ին փոխադրվեց Կօջօր ամարանոցը:

Երեքշաբթի առաւօտ, յունիսի 28-ին, թիֆլիսում լուր տարածվեց, որ Սև ծովում, Օդեսայի մօտ կործանվել է «Վլադիմիր» շոգենաւը, որը դուրս էր եկել հինգշաբթի Բաթումից, և որի մէջ շատերը կային թիֆլիսցիներից: Օդեսայից

ստացված հեռագրերն են հաղորդում.
«Յուլիսի 27-ի առաւօտեան, Օղէսայի մօտ խոր-
տակվեց «Ալադիմը» շոգենաւոր, դիպչելով խոտ-
ական շոգենաւորին: Ծովին զոհ գնացին 55 հոգի:
ճանապարհորդներ, ազատվեցան 91 հոգի: Ազատ-
վածների թիւում են՝ իշխանուհի Եղիսարէթ Բէ-
բուհեան իր Գեորգի որդու հետ. նրա քոյր Նինա
կորցանովան, որը հիւանդ էր և ոտներից յտակե-
մանդէլ չէր կարող, խեղդվեց: Ազատվեցին նոյն-
պէս ժամադրած կայսի կինը իր որդու հետ, վա-
ճառական խոզաբոլի ընտանիքը, Թիֆլիսի նա-
հանգական դատարանի պրոկուրորի օգնական
Դիմիտր, ուրիշների ազգանունները դեռ ևս յայտնի
չեն:» Տեղական «НОВ. ОБОЗРЕНИЕ» լրագրի ստա-
ցած տեղեկութիւնները համեմատ, «Ալադիմը»
շոգենաւոր դուրս եկաւ Բաթումից հինգշաբթի,
յունիսի 23-ին, կէսօրին, աջողութեամբ հասաւ
Եւպատորիա, և ապա կիրակի, 26-ին, շարունա-
կեց իր ճանապարհը դէպի Օղէսա: Յունիսի 26-ի
գիշերը Սև ծովի վրա սաստիկ փոթորիկ էր և
թանձր մէջ Գրա չնորսով, մի անյայտ խառնակ
շոգենաւոր ընդհարվեց խորտակ և հին ձկն «Ալա-
դիմը» շոգենաւոր: «Ալադիմը» շոգենաւոր ստա-
ցած հարուածը այնքան զորեղ էր, որ նաւը մի
փոքր ժամանակից յետոյ դէպի յատակն սկսեց զե-
նալ: Այդ սարսափելի դժբաղդութեան ժամա-
նակ մօտից անց էր կենում Օղէսայից Եւպատո-
րիա գնացող «Ալեքսէյ» շոգենաւոր, որը և մեծ
օգնութիւն հասցրեց: Ազատվածներն են 91 հոգի,
որոնց թիւում և Սմիտէն, զերձակ Դիւրան, և
Լակսին ընտանիքը և մի քանի ուրիշներ: Բա-
ցի դրանցից խեղդվեցին՝ Բազուի զործարանատէր
Տէրէնտիկի կինը և բազուի խոշոր ցորենաւաճառ
Թուսայից:

Իտալիայի Միլան քաղաքից մի նամակով մեզ
գրում են հետևեալը. «Երբեք Ամբրոջիանսի վեր-
ջացել է իր երաժշտական ուսումը և արդէն
քննութիւն բռնեց: Նա մտադր է առաջիկայ
աշնանը Իտալիա մնալ և մասնակցել օպերային
ներկայացումներին»:

Ինչպէս երևում է մենք, Թիֆլիսցիներս, այս
տարի ամառ, բառիս բուն նշանակութեամբ, չենք
ունենալու: Մէկ օրից յետոյ արդէն յուլիս ամի-
սին է կանգնել, և մենք մինչև այժմ օրինաւոր
չուք, որ սովորական է եղել Թիֆլիսում յունիս
ամսին, չենք տեսել: Անձրեւ, ջամբ, մինչև անգամ
ցուրտ, աշնանային եղանակ գիշերները միմանց
յաջորդում են անդադրաւ: Գրա պատճառով,
Թիֆլիսի շրջակայքներում գտնվող ամառանոցները
մասնաւոր թէ դատարկ են և ընկալարաններ զինը
չառ ընկած է այդ ամառանոցներում:

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի նահանգապետի
հոգատարութեամբ, նահանգի գիւղերում կազմվել
են յատուկ գումարներ, որոնք պէտք է գործադր-
վեն զանազան գիւղատնտեսական բարեօրոշման
համար: Այդ գումարը արդէն հասել է 567,428
րուբլի 86 կօպէկի, բացի հաջորդողներից, որ ժո-
ղոված է շտեմարաններում մօտ 206,903 պօլտ:
Այժմ մի քանի գիւղեր սկսել են իրանց գումար-
ներով մի քանի կատարելագործված մեքենաներ
մտցնել իրանց գիւղատնտեսութեան մէջ: Յարկի-
կօլօղի գիւղը իր գումարով գնել է այս տարի
մի հնձող մեքենայ, որը և փորձել է նորերս նոր
հասած հացաբոյսերի վրա: Փորձը, ինչպէս հաղոր-
դում է «Кавказское Сельское Хозяйство» շաբա-
թաթերթը, եղել է շատ աղող և գիւղացիները
այնքան հաւանել են այդ մեքենային, որ վճուղ են
դարձեալ մի քանի մեքենաներ գնել:

Աերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ
խօշորան թիւը քաջապատասխան քանի դնում ա-
ւելի է տարածվում խօշորան Սամսոնի կողմերից
անցնել է արդէն դէպի Եօղդատի, Ալինի, Էնկիւրի
կողմերը և բաւական թիւով դոհեր է տանում:

Տեղական ուսու լրագրիներին Գոթայիցից գե-
րում են, որ յունիսի 25-ին, Գոթայիսում աւարտ-
վեց հինգ գուրիացիների դործի դատաստանական
քննութիւնը: Այդ հինգ գուրիացիները մեղադր-
վում էին այն բանում, որ նրանք 1893 թիւ
սեպտեմբերի 1-ի գիշերը Օղուրդիթի գաւառի
Նիգօիտի կայաքանում յարձակում էին դործել
երկաթուղիական գնացքի վրա և սպանել էին
ժանդարմների ուսուի օֆիցերին: Կովկասեան կա-
ռավարապետի հրամանով, նրանք ենթարկվեցին

գինւորական դատարանի քննութիւնը: Ձինւորա-
կան դատարանը, հինգ գուրիացիներից չորսին
դատապարտեց մահվան պատժի, կախաղան հա-
նելով նրանց, իսկ հինգերորդին արգարացրեց:
Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնը մի
առանձին յանձնաժողով է ուղարկում դէպի Կարս
և Երևան, այն տեղերը նկարագրելու համար, որ-
տեղերով որ պէտք է անցնի երկաթուղին: Յանձ-
նաժողովը պէտք է հետագոտէ Թիֆլիսի նա-
հանգի Բօրչալու գաւառը, Երևանի նահանգը և
Կարսի շրջանը: Յանձնաժողովի անդամներն են՝
պ. Բօչկարով, վ. Դանիլովիչ և Ա. Արզուման-
սկի:

ՆԵՐՍԱՆԻՅ մեզ գրում են. «Փետրական դպրոցի
հոգաբարձուներից մի քանիսը, օգտվելով միանե-
րի բացակայութեան, վճուղ են ուսուցչական
խումբը անփութի պահել և գալ տարի: Հոգա-
բարձութեան մի մասի այդ որոշումը մեծ դժու-
հութիւն է պատճառել հասարակութեան զանա-
զան շրջաններում: Իսրաէլայից երևանցու յայտ-
նի է, որ ուսուցչական այժման խումբը միան-
գամայն անհամապատասխան է իր դիրքին և իր
կոչման, և հասարակութիւնը հոգաբարձական նոր
ընտրութիւն կատարելով, սպասում էր, որ այդ
հոգաբարձութիւնը կը կազմի նոր, պիտանի վար-
ժապետական խումբ, հրաւիրելով և մի արժանա-
ւոր տեսուչ. իսկ ահա հասարակութիւնից ընտր-
ված հոգաբարձուների մի մասը իրան թող է
տալիս մի այդպիսի աններելի քայլ: Ի դէպ. Գա-
լիանեան դպրոցի հոգաբարձական պատգամաւոր-
ների ընտրութիւնը քանդվեց, չնորհի մի քանի
աղաների ջանքերի, այն պատճառով, որ պատ-
գամաւորների մեծամասնութիւնը ընտրված էր
ինտելիգենտ մարդկանցից: Քաղաքի մէջ լուրեր
են պտտում, որ մի քանի աղաներ զանազան
ստոր միջոցներ են ձեռք առել՝ իրանց հակառա-
կորդների ընտրութիւնը խանգարելու համար»:

ՆԱԽԱՅԵՆԻՍ գաւառի Բաղաբիկի գիւղից մեզ
գրում են. «Ամսիս 16-ին, աւաղակները, թիւով
15, մտնում են Բաղաբիկ գիւղը, որ գտնվում է
Աղուրիսից մօտ 7 վերստ հեռու, եղբ. Սարգիս և
Սերոբ Մարգարեանցի տունը, ժողովում են տան
մէջ եղած գրեթէ բոլոր իրերը, մօտ 1000 ռ. ար-
ժողութեամբ և տանում: Գիւղացիները, իմանալով
աւաղակների գալուստը, հրացան են արձակում,
իսկ վերջինները, գիւղացիներին սարսափեցնելու
համար, սկսում են կարկոթ պէս գնալու: Թա-
փել գիւղի ամեն կողմը, այնպէս որ ոչ ոք չէ հա-
մարձակվեց մօտենալ կողոպտող տանը: Մօտ եր-
կու ժամ հրացանաձգութիւնը շարունակվում էր
և աւելի քան 200 գնտակ տեղացի դժբաղդ Բաղա-
բիկի վրա այդ երեկոյ: Բոլոր գիւղացիք սարսա-
փահար են: Ամսիս 19-ին, Նախիջևանի պ. գաւա-
ռապետը, որ Համիս գիւղն էր գնացել, եկաւ
այստեղ և հարց ու փորձ անելուց յետոյ ասաց, որ
գիւղացիք իրանց պէտք է իրանց պաշտպանեն,
խոտաղացաւ տալ 5 նոր ձէ՛ծ հրացան, հրա-
մայեց իւրաքանչիւր գիշեր 8 պահպան դուրս
բերել, բացի դրանցից երեքը պահպաններ կար-
գել չըլձալայ գիւղերի ճանապարհներին: Գիւղացի-
ները յայտնել են, թէ թուրքերը նրանց շատ են
նեղացնում և որ աւաղակներին պահող թուրքերն
են»:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Ամսիս 19-ին, խա-
ղապետի թաղապետական դահլիճում կայացաւ
Մարիամեան օրիորդաց ուսումնարանի 1893—94
ուսումնական տարվայ տարեկան հաշուետու-
թեան հանդէսը ու ձեռագործների վաճառումը:
Ներկայ էր մեծ բազմութիւն: Այս տարի այդ ու-
սումնարանից աւարտեցին 20 հոգի: Ձեռագործի
վաճառումից և կամաւոր նուէրներից գոյացած
արդիւնքը հասնում է մօտ ինն հարիւր ռուբլու»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱՑՈՒՄ ԵՄ ՍՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՕՐԵՆՔԻՆ
ՈՒՆԳԱՐԻՍՏՈՒՄ

Բաւական ժամանակ է արդէն, որ ընթերցող-
ները լրագրիներում կարդան, թէ մի ինչ որ
քաղաքացիական ամուսնութեան վերաբերեալ
հարց կայ Ունգարիայում, որը երկարատեւ և
բուռն վէճի առարկայ է այդ երկրում: Կառավա-
րութիւնը ամեն ջանք գործ էր դնում՝ ընդունել
ստալու քաղաքացիական ամուսնութեան վերաբե-

րեալ նոր օրէնքը, իսկ հոգեւորականութիւնը սաս-
տիկ դիմադրում էր, և մինչև անգամ բանադրան-
քով էր սպառնում: Վերջապէս կառավարութիւնը
յաղթող հանդիսացաւ, և մարդաստների ժողովի
վճռով, այդ նոր օրէնքը արդէն ընդունված է Ուն-
գարիայում:

Կաշխատենք ծանօթացնել այդ նոր օրէնքի հե-
տքը: Կը գործադրվի իր հաստատման օրից մի
տարի ժամանակամիջոց անցնելուց յետոյ Ունգա-
րիայում, բացի խորվաթիայից:

Նոր օրէնքի հիմնական նպատակն է՝ քաղաքացիա-
կան ամուսնութեան ծէսը պարտաւորական դարձ-
նել՝ ամուսնանալու ժամանակ, այն ինչ մինչև
այժմ պատկի արարողութեան պարտաւորական
ծէսը եկեղեցական ծէսն էր: Պետութիւնը օրինա-
կան էր համարում միայն այնպիսի պսակ, որ
կատարում էր այն եկեղեցու հոգեւորականութիւ-
նը, որին պատկանում էին պսակվողները: Խառն
պսակների համար քաղաքացիական էր անվում այն
մարդը, որ պսակը օրինաւոր էր համարում, եթէ
թեան ձեռքով, որի դատարանութեանը պատկանում
էր փեսացուն: Նոր օրէնքով պետութիւնը ընդու-
նում է և պաշտպանում է միայն այն պսակները,
որոնք կատարվում են պետական օրգանների ձեռ-
քով:

Պետութիւնը չէ արգելում պսակել և եկեղե-
ցական ծէսով և մինչև անգամ խորհուրդ է տա-
լիս պսակվողներին՝ պսակաւորութեան եկեղեցա-
կան ծէսն ևս կատարել, բայց պսակի սրբադու-
թիւնը պէտք է անպատճառ կատարվի պետական
երկու պաշտօնեաների առաջ, և այն հոգեւորա-
նը, որը պսակի արարողութիւնը կը կատարի
քաղաքացիական ծէսից առաջ, պատասխանա-
ւորութեան է ենթարկվում դրա համար:

Որովհետեւ պսակի արարողութիւնը սրբադու-
րապէս կատարվում է պետական օրգանի ձեռքով,
այդ պատճառով պսակաւորութեան վերաբերեալ
բոլոր նախապատրաստական աշխատանքներն էլ
նա է կատարում. նոյնպէս և պսակվելու ժամա-
նակ առաջ եկած զանազան խոչընդոտների լու-
ծելու իրաւունքը, որ մինչև այժմ պատկանում էր
քաղաքապէս հոգեւորականութեանը, այժմ անց-
նում է պետութեանը և մասնաւորապէս—վար-
չական օրգաններին, արդարադատութեան մինիստ-
րին կամ կայսրին, նայելով թէ ինչ տեսակ խոչ-
ընդոտ է:

Որովհետեւ մինչև այժմ ամուսնական իրաւունքը
Ունգարիայում հիմնված էր զանազան եկեղեցի-
նոր օրէնքների վրա, այդ պատճառով էլ պսակվե-
լու համար ծագած խոչընդոտները իւրաքանչիւր ա-
ռանձին դէպքում կախված էին այն կանոններից,
որ գոյութիւն էին այս կամ այն եկեղեցում: Այժմ
այդ խոչընդոտները կամ արեւելքները կարգադրում
է ինքն պետութիւնը, միակերպ բոլոր քաղաքնե-
րի համար: Այդ խոչընդոտներն են՝ ամուսնութեան,
ֆիզիկական առատութիւնը, պատանակութիւնը,
մօտիկ ազգականութիւնը, նախկին ամուսնու-
թիւնը և այլն: Թող է տրվում քրիստոնեային
պսակվել ոչ-քրիստոնեայի հետ: Օրինական է հա-
մարվում և կաթօլիկ քահանայի ձեռքով կատա-
րած պսակը, չը նայելով, որ վերջինս չէ ազատ-
վում դրանով եկեղեցական պատժից:

Նոյնպէս պսակը քանդուլու համար միակերպ
կանոններ են հաստատված բոլոր քաղաքացիների
համար, անկախ ամուսնից: Դատարանութիւնը
Սկզբունքով պսակի անխելութիւնը կաթօլիկնե-
րի համար նոր օրէնքը չէ ընդունում և հետեւալ
պատճառներն են օրինական համարվում պսակը
խղելու համար,—ամուսնական հաստատութեան
խախտումն, անառակ կեանքը, ամուսնու կեանքի
զէմ արած փորձը կամ ծանր տանջանքները, ա-
մուսնից լքելը մէկին մահվան պատժի ենթարկելը
կամ պատիւը արատաւորող ազատութիւնից զրկե-
լը ոչ պակաս քան 5 տարով:

Երբ ամուսնական պարտաւորութիւնները ծանր
կերպով խախտվում են, երբ ամուսնից զեր-
դում են իրանց սեփական եղանակը, դատարանը իրա-
ւունք ունի խղելու ամուսնութիւնը, եթէ նա
այն համոզմունքին կը գայ, թէ ապահարդան
խնդրող ամուսնից կենսակցութիւնը անտանելի
է: Միւս կողմից, սակայն, օրէնքը չէ թողաւորում
ապահարդան տալ, եթէ ամուսնից փոխադրւած
համաձայնութեամբ պահանջում են այդ, կամ եթէ
անյաղթելի զղուանք են դրում ամուսնական կե-
նակցութեան մէջ:

ՍՈՒՇՈ ՎԱՋԵՐԻՈ
«L'Inde» լրագրի թղթակցը հաղոր-
դում է, թէ որպէս են պահում բանտում կարնօին
սպանող Կադէրիօն: «Նրա սենեակը գտնվում
է բանտի ստորին յարկում: Սենեակում դրված
են անկողնակալ, մի աթոռ, սեղան և ջրի աման:
Յանցաւորի վրա անդադար հսկում են եր-
կու ոստիկաններ, որոնք աչք չեն հեռացնում
նրանից: Նա շատ անհոգ է երևում. ըստ երեոյ-
թիւն նա հաշիւ չէ տալիս իրան՝ իր կատարած
հրէշաւոր սպանութեան համար: Ամեն բանից ե-
րևում է, որ նրա մտաւոր ընդունակութիւնները
չառ սահմանափակ են, իսկ կրթութիւն նա ա-
մենին չէ ստացել: Նա շատ վատ է խօսում
ֆրանսերէն և հասկանում է միայն այն ժամա-
նակ, երբ խօսում են կարճ նախադասութիւննե-
րով: Օրվայ մեծ մասը և ամբողջ գիշերը նա
հանգիստ ընում է, ամենին չը մտածելով, թէ
ինչ հետեանքներ կունենայ իր կատարած յան-
ցանքը: Մեծ ախորժակով ուտում է, որպէս մի
մարդ, որ երկար ժամանակ ենթակայ է եղել
զրկանքներին և քաղցին (կալանաւորութեան ժա-
մանակ, որպէս յայտնի է, նրա մօտ ոչ մի սան-
տիմ չը գտնվեց): Պահապանների հետ խօսելու
ժամանակ նա ամենին ցանկութիւն չէ յայտնում
իմանալ, թէ ինչ դրութեան մէջ է գտնվում իր
գործը»:

Յանցաւորին քննութեան ենթարկելու մասին
Ֆրանսիական լրագրիները հաղորդում են հետե-
ւեալը. «Յանցաւորը ըստ երեոյթիւն յաղված չէ,
և շատ համարձակ պատասխաններ է տալիս:
Մինչև քննիչի գալը, ոստիկանը սկզբնական
քննութեան է ենթարկում նրան»:

—Ձեր անունը ինչ է:
—Իմ անունն է Չէզարիօ Ջիովաննի Սանտո:
Ուրեմն դուք խտաւցի էք, և այդ շատ լաւ ե-
րևում է ձեր արտասանութիւնից: Դուք երկար
էք ապրել Ֆրանսիայում:

—Ոչ, ես նոր եմ եկել Ֆրանսիա:
—Ո՞ր էք ծնվել դուք:—Ես ծնվել եմ Մօնտե-
վիճիում, Միլանի նահանգում: 22 տարեկան եմ:
Գնացի Սետտա՝ դորժ գտնելու, բայց չը գտայ,
ոտով Պարիզ գնացի, որովհետեւ փող չունիի եր-
կաթուղու տոմսակ վերցնելու համար: Մի քանի
օր առաջ Պարիզից գնացի Լիօն: Ես կարծում
էի, որ այնտեղ դորժ կը գտնեմ ցուցահանդիսի
ժամանակ:

Ապա քննիչ դատաւորը քննութեան ենթարկեց
յանցաւորին սպանութեան երկրորդ օրը:

—Չէզարիօ,—հարցրեց նա,—ինչու էիք ուղում
սպանել նախագահին: Դուք որ և է թշնամու-
թիւն ունէիք նրա դէմ:—Ոչ, պատասխանեց յան-
ցաւորը: Սակայն նա բռնակալ էր և այդ պատ-
ճառով էլ սպանեցի նրան:—Դուք անարխիստ
էք:—Այո, ես պարծնեմ եմ դրանով:—Ինչու
էիք դուք սպանում:—Ես այդ կասեմ երբեք
դատաւորներին. նրանց կը բացատրեմ իմ կա-
տարած յանցանքի շարժառիթները:—Դուք հա-
մախոհներ ունէիք:—Ոչ, ես գործում էի ինք-
նուրոյն և ոչ ոք չը գտէր իմ դիտաւորութիւն-
ների մասին:—Հասնում էիք դուք ում և ինչ
Լիօնում և որ և է մէկի հետ դուք յարաբերու-
թիւն ունէիք այս քաղաքում:

—Ոչ մէկ մարդու: Ես մինչև անգամ անձամբ
եմ քաղաքին, թէպէտ և աշխատում էի մօտիկ,
վննում, մի տարի առաջ, մի հացադործի մօտ:
—Ինչպէս կատարեցիք դուք սպանութիւնը:—Ես
մօտ վաղցրի և յետ միջրի մի կիւրախի ձիւն:
Դաշոյնը պատրաստ բռնած ունէի ձեռքում: Ես
դաշոյնը խրեցի նախագահի փորում Վեցցէ ա-
նարխիստ աղաղակով: Ամբողջ յարձակվեց վրաս,
զետին դրոյնք և հարուածներ սկսեցին տեղալ
վրաս: Ոստիկանները բռնեցին ինձ և տարան ոս-
տիկանատուն:—Դուք պնդում էք, որ համախոհ-
ներ չունէք:—Այո: Բայց նախագահ... մեռաւ:
—Քննիչ դատաւորը ոչինչ չը պատասխանեց
նրան, բայց Չէզարիօն գոռակեց և չը կարողա-
ցաւ ծածկել իր ուրախութիւնը. նա ժպտաց:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Daily News» լրագրի Կ. Պօլսի թղթակցը
խօսեցրով, Օսմանեան կայսրութեան մէջ հրատա-
րակվող բոլոր լրագրիներին արգելված է տպել
որ և է մանրամասնութիւններ կարծիք սպանու-
թեան մասին: Թող է տրված միայն հաղորդել

տեղեկություններն ֆրանսիական հանրապետության
նախագահի յանկարծակի մահվան մասին:
— «Հռոմից հեռագրում են «Figaro» լրագրին,
որ իտալական պոլիցիան կալանավորել է 150 ա-
նարկախոսներ, որոնց մեջ գտնվում է լուսանկար
Ֆիորանի, որ յարաբերություններ ունի բուրժու-
անարկախոսների հետ բռնակցում:

— Նիցցայից հեռագրում են Պարիզի լրագրին-
երին, որ այնտեղ կալանավորված են հինգ իտա-
լացի անարկախոսներ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱԶԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻԶ, 27 յունիս: Որոշեցին անարկախական
յանցանքների օրինագծի հիմնարկը, որոնք կը
գովառեն այդ յանցանքները և կը դրեն դեպի
այդ յանցանքները գործելու, կենթարկվեն ուղղիչ
ուսույթանքի հաստատանքին:

ՊԱՐԻԶ, 28 յունիս: Պարիզի նախագահական
միջնադարի խորհրդի մշակած օրինագիծը՝ անար-
կախական հալածելու մասին՝ հորս յողուածից է
բաղկացած: Առաջին յողուածի մեջ նախատես-
ված են այն դեպքերը, երբ մասուլը կարող է են-
թարկվել ուղղիչ դատարանի դատաստանքին: Երկրորդ
յողուածը վերաբերում է պրոպագանդան հալածել-
ուն: Երրորդ յողուածը որոշում է, որ մի տարի և
աւելի երկարատև ժամանակամիջոցով բանտարկու-
թեան դատապարտվածները պետք է միայնակեաց
բանտարկութեանը ենթարկվեն և պատիժը կը
լուծուի յետոյ պետք է անպատճառ արտուրկել: Զոր-
քող յողուածի գործութեանը, անարկախական պրո-
պագանդան տպելը և տարածելը պատժվում է բան-
տարկութեամբ: Չինուորական դատարանը արդա-
տաբանական գնահատելու, որը գործանադիր ժա-
մանակ, անդուլտութեամբ սպանեց պրոպագանդիստ
մարիերին:

ԼՕՄԻՆ, 28 յունիս: Սեուլից հաղորդում են,
որ Չեմուխում ափ է իջեցրած կրկին 1000 մար-
դուց բաղկացած մի զորաբաժին: Եւպատական
դեսպանը յունիսի 3-ին նոր պահանջներ ա-
րեց:

ԲԵՐԼԻՆ, 28 յունիս: Դաշնակցական խորհուր-
դը մերժեց եգիպտական ղեկ օրէնքը վերացնելու
վերաբերեալ առաջարկութեանը և հաւանութեան
տուեց բաղկացած մի զորաբաժին: Եւպատական
դեսպանը յունիսի 3-ին նոր պահանջներ ա-
մանները մտնելը թող առելու մասին:

ՀՈՍՏ, 28 յունիս: Պապը շատ ուժեղացաւ է
կայծ, ոտի վրա նորոգվեց նախկին ուղեգրը:
Պապի մերձաւորները սպասում են նոր մտայնութեան
մահվան: Պապը շատ է տանջվում շրթից և նա
յաճախ ուշաքիտի է լինում:

Կ. ՊՈԼԻՍ, 28 յունիս: Այսօր, կէսօրից յետոյ,
12 ժամ 20 րոպէին տեղի ունեցան զետեղ երկու
ցնցումներ, որոնք շատ վնաս պատճառեցին
Ստամբուլում: Մի քանի մարդիկ սպանված են:
Բնակիչները անց են կացնում բաց երկնքի տակ:
Գրասենեակները, բանկերը և բոսան փակված
են:

ՍՕՖԻԱ, 28 յունիս: Ստամբուլի ղեկ գան-
դաններ են տուել մասնաւոր անձինք՝ իշխանու-
թեանը ի չար գործ գնելու համար: Բացի դրա-
նից քննութեան է շարունակվում Բելլիկի գործի և
Տիֆլիսի մահվան մասին, որին բանտում տան-
ջելով մահվան դատը հասցրին: Ընդհանուր
կարծիքով, Ստամբուլի չի աջողվի ազատվել
դատաստանական ընտելութից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍՍ

Յունիսի 28-ին

Լճուծի վրա 10 ֆունտ արծէ . . .	93 ր. 15 Կ.
Բերլին վրա 100 մարկ . . .	45 ր. 60
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	36 > 90
Ռուսի . . .	7 > 47
Մարսայի կուպոններ . . .	149 > 25
Արծաթ . . .	— > —
Բորսայի դիվիդենդ . . .	5 > 7
Պետ. բանկի 5% տուս 1 շրջանի . . .	— > —
— — — 2-րդ . . .	— > —
— — — 3-րդ . . .	— > —
5% օսկեայ բնտա 1884 թ. . .	160 > 75
4 1/2 օսկեայ փոխառութեան . . .	— > —
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. . .	— > —
— — — 2-րդ . . .	— > —
— — — 3-րդ . . .	— > —
— — — 4-րդ . . .	— > —
Ներքին 5% առաջին փոխառութ. 249 . . .	— > —
— — — երկրորդ . . .	225 > —
Պետական երկաթուղային բնտա. 103 . . .	— > —
4 1/2 բնտա . . .	— > —
4% ներքին փոխառութեան . . .	94 > 50
5% գրաւ. թղթ. ագլ. կալ. բանկի . . .	— > —
Ագլ. կալ. Պետ. բանկի խաղաղութ. . .	— > —
Գրաւ. թղթ. . .	— > —
4 1/2% վկայակ. գիւղ. հող. բանկի. 94 > 75	
4 1/2% գրաւական թղթեր կալուած. . .	— > —
Պետ. կրեդիտ. բնկեր. մտաւ. 154 > —	
— — — թղթաւ. . .	— > —
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. . .	— > —
Բնկերութեան օրկազմաները. 101 > 25	
Մոսկուայի քաղաք. օրկազմաները. 101 > 25	

Օրէնսդիր — — 1007/8 > —
Թիֆլիսի — — 99 > —
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. 1003/8 > —
— — Գրաւ. թղթի — 101 > —
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութեանը
խաղաղ է:

ԻՄՊԵՐԱՏՐԻ ՔԱՆԱԾԱՐ ՀՐԱՄԱՐԱՆԻՆ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՍՄԱՆԵՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌԻ ՀԻՒՍԵՂԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնոյի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի

կրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ — 11—12 ժ. վերաբու-

ժութեան և վնասական (սիֆիլիս) հիւանդու-

թիւններին:

Կ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ — 9—10 ժ. աչքի և նեար-

դային:

Գ. Գ. ՐՈՒԿՈՎԱՆԻ — 10—11 ժ. ներքին, երե-

խաների և կանանց:

Ա. Գ. ԳՈՒՐԳՈ — 1—1 1/2 ժ. ականջի, կոկորդի,

և քթի:

Կին-բժիշկ ՏՈՒՐՈՎԱՅ — 12 1/2—1 ժ. կանանց ց.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ — 1—1 1/2 ներքին և երե-

խայոց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԳՈ — 6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու

սեռական օրգանների:

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ — 7—7 1/2 ժ.

Ի. Ն. ՖԻՆԵՑԻՆՈՎ — 7—7 1/2 ականջի, կոկորդի

և քթի ու նեարդային հ. երկուշարքի, չորեքշա-

թի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԳՈ քիմիական և խոշորացուցական

հետազոտութիւններ է անում մէզի, խիւր, ա-

րեան, կաթի և այլն:

Վճար 50 Կ.: Համարակցի (կոնսուլտի) 7

օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցումը

ընդունվում են և ԳԻՇԵՐՈՒԹԻ ՀԻՒՍԵՂԱՆԵՐ:

Հիւանդանոցի վերահսկումը՝

բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ: (№ 72)

ԵՐԵՎԱՆԻ ԾԱՌԱՎՈՐՈՒՄ Է ԼԱՆ ԿԱԳ-
ՄԱԿԵՐԱՎԱԾ

ԱՊՏԵԿԱՐՍԿԻ ՄԱԳԱՋԻՆ

Յանկացողներին խնդրում են զիմը այս

հասցեով. Գեղադոր՝ Արշակ Յակով-

բեանցին, ԵՐԵՎԱՆԻՄ:

(№ 79) 1—3

Նիկողայոս Տէր-Ղեւոնդեանցի հրատարա-
կութիւնների պահեստը յունիսի 10-ից

մինչև առաջիկայ սեպտեմբերի 1-ը յանձն-
ված է Կենդանական գրադաճառանոցին,

ուր պետք է դիմեն այդ գրքերի պէտք

ունեցողները: (№ 73) Կ. 2—10

ՆԻՐՎԱՆՁԱԴԻ „ԱՐՄԵՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ“

Վաճառվում է հիւրանի մօտ. Тифлисъ,
Пирванзадэ. Դիւն է Խանապարհաճախով

1 ր. 50 Կօպ.: (№ 72) 3—10

„ՏԱՐԱՋ ԵՒ ԱՂԲԻԻՐ“

Շարունակվում է ներկայ 1894 թվականի

բաժանորդագրութեանը:

ԲԱՅՎԱՍ Է ԿԵՍ ՏԱՐԱՋ ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒ-

ԹԻՒՆ

„Աղբիւր“ տարեկան գինը 3 ր. է, կէս

տարվանը՝ 2 ր., իսկ „Տարալիւր“՝ 6 ր.

(№ 1-ից բոլոր №-ը), կէս տարվանը՝ 3 ր.:

Հասցէ՝ ТИФЛИСЪ, редакция „Ар-

бюръ“ կամ „Таразъ“.

(№ 65) 3—5

Տալիս եւ ՖԷԼԹԻ ԴԱՍԵՐ երօպական ձայնա-

գրութիւնով. նոյնպէս կազմվում է հայկական օր-

կեստը: Դիւնը Կարապետ Աղնաւորեանցին. ՃԼԵՑ-

ная площадь, Петхайнскій переулокъ, домъ Гар-

соина № 8, (№ 73) 3—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ, ԺՐԵՎԻ ՀԱ- ՄԱՐԱՐԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱՆ զԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ Փակուածտը աւարտած, ԿԱՄԵՆՈՒՄ Է ՊԱՏ- ՄՈՒԹԵԱՆ կամ ՖԲԱՆՍԵՐԷՆ ԼԵՋՈՒԻ ԴԱՍԵՐ ունենալ հայոց հողերը զարգացնելու մէկուծ: Պայմանների համար մինչև օգոստոսի 1-ը դիմել „Մշակ“ խմբագրատուն, յանձնելու վ. փափաղանցին: (№ 68) 5—5

ՇԱՄԱՌՈՒ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԻԱԿԱՆ ՄԻՊԱՍԵԱՆ զարգացնելու համար զիւղե-
րում հարկաւոր են Դ. դասակարգի ուսուցիչներ: Ռոճիկը ըստ առաջին կողմերի:
Բացի դրանից տրվում է նաև ճանապարհաճախ, բնակարան, փայտ և ծառայ: Յան-
կացողները թող դիմեն ինձ, Շամալի:
1—3 (№ 74) Թեմական տեսուչ՝ Նիկիշ քահ. Գեղամեանց

Ն Ա Ռ Ա Ջ Գ Ո Ւ Շ Ո Ւ Թ Ւ Ն

Մեծ պահանջը և ահագին հոգալը մեր հնարած

ԾԱՂԱԿԵԱՑ Օ-ԳԵ-ԿՈԼՈՆԻ

ԳԼԻՑԵՐԵԱՆ ՍԱՊՈՆԻ ՆԿԱՐԵՐՈՎ

ԳԼԻՑԵՐԵԱՆ ՓՈՇԽԻ

ԷԿՍՏՐԱԿՑ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵԱՍԱՄԱՆԻ ԵՒ ԲԵՋԵՐԱՑԻ ԾԱՂԱԿԵՐԻՑ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱՐԿՂԻՆԵՐ և այլն

ստիպում է մեզ հետ մրցողներին ՆԱՐԵՑՆԵԼ ոչ միայն անունները, այլ և մեր
մասնագիտութիւնների ներքին սարքին, որպէս զի դրանով մարդիկն են հասարա-
կութիւնը և այդպիսով մեծացնելու իրանց արդիւնքների վաճա-
ռումը, և այդ պատճառով խնդրում ենք պատուաւորաւ գնորդե-
րին, մեր արդիւնքները գնելու ժամանակ, առանձին ուշադրու-
թիւն դարձնել ֆիրմայի և գործարանական մարկայի վրա:

Բ արձրագոյն հաստատված ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲՐՈՎԱՐ ԵՒ ԸՆԿ.

1—12 (№ 74—ամս. 15)

Այս տարվայ յունիսի 1-ից, Գոյովինսկի պրոսպեկտի վրա, Բէյտերի տանը գտնվող
ՄԱԳԱՋԻՆԸ ԵՒ ԱՐԶԵՍՏԱՆՈՑԸ ԱՆՅՆՈՒՄ են Ա. փարսադանովի տանը, Միքայէլեան կա-
մարջի վրա՝ Ա. Ն. փարսադանովի և ընկ. պատրաստ կոշիկների գործարան՝ Ֆիրմայի
ներքոյ Ա. Տէր-Ջաքարեանի անձնական վերահսկողութեան տակ, և այդ պատճառով
շատաւորւմ են հաղորդել իմ պ.պ. մշտական պատիրողներին և պատիրողուհիներին և
յոյս ունենալ, որ կը շարունակեն ինձ պատուէրներ տալ:

3—3 (№ 72) Գարգանքով՝ Տէր-Ջաքարեան

Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ն

Բ Ր Օ Կ Ա Ր Ե Ի Ը Ն Կ.

Հնարողներ

„ԾԱՂԱԿԵԱՑ Օ-ԳԵ-ԿՈԼՈՆԻ“

Ձանազան զոյնի

Ն օր ու թիւն՝ առաւելի շուր

„Օ-ԳԵ-ԲՐՈՎԱՐ“

Զգուշ պէտք է լինել կեղծումներից

(ամ. 30 № 67) 2—10

ԲԵՍԱՐԱՐԱՑԻ ՕՐԶԵՑ ԲԱՂԱԲԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ զուրկ լինելով ցայսօր մի
կանոնաւոր եկեղեցուց (ժամասացութիւնը մինչև այսօր կատարվում է յատուկ այդ նպա-
տակի համար յարմարեցրած մի խարիսով տան մէջ), մտադիր է ընդհանուր ոյժերով մի
վայելուչ, փառալիր եկեղեցի կառուցանել, որի իրադրութեան համար պէտք մօտ 15,000
ր. գումարը արդէն սկսել է իր մէջ հաւաքել. այսպէս, օրինակ՝ Պալեօգեան եղբայրները՝
1000 ր., Պարիս Պաղատարեանը՝ 1000 ր., Պապովիչ Սարգիս՝ 1000 ր., այլիկ Նիկոս-
րէթ Զախարեան՝ 1000 ր., հանգուցեալ կատարին է Վաղարի ժառանգներից՝ 1000 ր.,
Սարգիս Զեքէէ 500 ր., Նազարեան կատարին է 500 ր., Նազարեան Գարեգոր՝ 500 ր.,
Նազարեան Գովհանէս՝ 500 ր., Նազարեան Գրիգոր՝ 500 ր., Նազարեան Գալովր
500 ր., Ֆաբջանեան Խաչիկ՝ 500 ր., Ֆաբջանեան Զօրիփաիկ՝ 100 ր., և այլն:

Եւ որովհետեւ հարկաւոր գումարը լրացնելու համար պակասում է էլի մօտ 7—
8,000 րուրի, ուստի յիշեալ թրքախօս հոյ հասարակութիւնը դիմում է կովկասա-
բնակ արեւմտեկ եղբայրների օգնութեանը, յուսալով և համոզված լինելով, որ Կովկա-
սի դէպի բարեկործութիւնը միշտ զգայուն հոյ հասարակութիւնը չի զրանայ իր լու-
ման օտարաբնակ թրքախօս եղբայրների պալիսի մի կենսական կարիքը լրացնելու հարցում:

Նուիրատուութիւնները խնդրում են ուղարկել հետեւեալ հասցեով.
Въ Орѣевъ (Весарабѣ). Г-жѣ Екатерины Мартыновны Назаровой.
Ժողովարարութեան իրաւունքը ստացված է վիճակային Ատենից, որից ստացված է
և ժապարկեալ մատենա, ուր մուծվում են ցայսօր հաւաքված և հաւաքվելիք նուր-
բարեկործանները:

(№ 68) 3—3 Նորընծայ Մարտիրոս քահանայ զատիկեանց

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մ. ԴԵ-ԼԱ-ՖԱՐ ԵՒ ԸՆԿ.

Կատարում է հետեւեալ օպերացիաները.

1) Տոկոսաւոր թղթերի ապահովութեամբ՝ փոխառութիւն.

2) I, II, III խաղաղութեան տոմսակների վաճառումը, ԱՍՍԱԿԱՆ 5 ԲՈՒՐԻՒ
ՎՃԱՐՈՒՄՈՎ.

3) Փոխանակագրեր է տալիս Ռուսաստանի զանազան քաղաքների վրա.

4) Ընդունում է ժամանակաւոր և մշտական աւանդներ.

5) Բաց է անում ընթացիկ հաշիւներ՝ չէկերով.

6) Ընդունում է in casso վէկսիներ և ուրիշ զօրութեաններ:

Լիազոր՝ Ս. Պ. ՊԱՎԼՈՎ. Թիֆլիս, Մէրգելիկայայ փողոց, № 1.

Գ. ան ձա կ ու ձ գործակալն է՝ Նիկոլայ Կարամանովիչ Օհանէսով:

(№ 15) 21—50